

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱՐՈՎ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մինչև 100.000 դրամ գույքային պահանջներով պատահարների պարզեցված գրանցում

Ուշադրություն՝ այս գործընթացն իրականացվում է առանց ապահովագրական ընկերության և ոստիկանության ներկայացուցչի համաձայնության և (կամ) ներկայության:

Գործընթացին բավարարող պայմանները

1. Տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ),
2. ՃՏՊ-ում ներգրավված են միայն երկու ավտոտրանսպորտային միջոց (SU), որոնք ունեն գործող ԱՊՊԱ պայմանագրեր,
3. ՃՏՊ-ի արդյունքում վնաս է պատճառվել միայն այդ SU-ներին,
4. վնաս պատճառած անձն ընդունում է, որ ՃՏՊ-ի առաջացման մեջ միակ մեղավորն ինքն է և առկա է փոխադարձ համաձայնություն դրա վերաբերյալ,
5. տուժողի կողմից վնաս պատճառողից ակնկալվող վնասի հատուցման չափը չի գերազանցում 100.000 ՀՀ դրամը:

Վարորդների գործողությունները

1. Որևէ կերպ՝ այդ թվում ցանկացած հեռախոսի միջոցով առնվազն երեք անգամ լուսանկարահանվում է ՃՏՊ-ում ներգրավված SU-ները: Ընդ որում, լուսանկարահանումը (տեսանկարահանումը) պետք է կատարվի այնպես, որպեսզի լուսանկարներն (տեսանյութն) առնվազն արտացոլեն երկու SU-ների հետվթարային փոխադարձ դիրքերը և ՃՏՊ-ի հետևանքով դրանցից յուրաքանչյուրի ընդհանրական վնասվածքները,
2. Լրացվում է համաձայնեցված հայտարարագիրը և ՃՏՊ-ին մասնակից վարորդները ստորագրում են այն,
3. վարորդները ազատում են ճանապարհի երթևեկելի մասը, եթե վթարի արդյունքում SU-ների հետվթարային դիրքերը խանգարում են ընդհանուր երթևեկությանը,
4. վնաս պատճառած վարորդը ՃՏՊ-ի մասին իր կողմից վարած ավտոմեքենայի ԱՊՊԱ Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով տեղեկացնում է Ապահովագրողին տեղի ունեցած ՃՏՊ-ի մասին՝ հարցադրումներին պատասխանելով առավելագույնը համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվությունը (ուշադրություն՝ ապահովագրական ընկերությունն իրավունք չունի համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվությունից ավել տեղեկատվություն հարցնել ձեզանից),
5. ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո վարորդները իրենց SU-ներով հեռանում են վթարի վայրից:

Ապահովագրական հատուցում ստանալու կարգն ու ժամկետները

1. ՃՏՊ-ի տեղի ունենալուց հետո **5 աշխատանքային օրվա ընթացքում** տուժողը պարտավոր է ստորագրված համաձայնեցված հայտարարագիրը և հատուցում ստանալու համար դիմումը (դիմումը հնարավոր է ներկայացնել նաև ՃՏՊ-ը տեղի ունենալուց հետո եռամսյա ժամկետում) ներկայացնել վնաս պատճառած SU վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը՝ վերջինիս հնարավորություն տալով՝
 - ✓ ծանոթանալ կամ որևէ կերպով սրանալ կատարված լուսանկարների կամ տեսանյութի էլեկտրոնային փարբերակներին,
 - ✓ զննել վթարված SU-ն:
2. ապահովագրական ընկերությունը հատուցում ստանալու դիմումը ստանալուց հետո **3 աշխատանքային օրվա** ընթացքում ապահովում է վնասի փորձաքննության իրականացումը և արդյունքների մասին ծանուցումը Տուժողին և Ապահովագրողին,
3. ծանուցման պահից սկսած **5 աշխատանքային օրվա օրվա ընթացքում վնասի** լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննության նշանակման պահանջի բացակայության կամ այդ ընթացքում փորձաքննության արդյունքների համաձայնության պահից հետո **1 աշխատանքային օրվա ընթացքում** ապահովագրական ընկերությունն ընդունում է հատուցումը վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում, որի մասին **1 աշխատանքային օրվա ընթացքում** ծանուցում է տուժողին,
4. հատուցման որոշման հետ համաձայնության առկայության և հատուցման եղանակը գումարի ստացմամբ ընտրելու դեպքում ապահովագրական ընկերությունը **5 աշխատանքային օրվա ընթացքում** հատուցման գումարը վճարում է տուժողին կամ տուժողի կողմից հատուցման եղանակը վերանորոգում ընտրելու դեպքում՝ ապահովում է SU-ի վերանորոգումը: